

վեր անկախ Ֆրանսայի թագաւորներէն. բայց 1575-ին նուաճուելով՝ բոլորովին հպատակեցան Ֆրանսական կառավարութեան :

Լուսինեան ցեղը փայլեցաւ ոչ միայն Եւրոպայի մէջ, այլ եւ Արեւելքի մէջ ալ, ինչպէս իրենքու արշաւանքներու հետեւանքով :

Ինչպէս իրենքու երբ մտան Ս. Երկիր, տեղացի քրիստոնեաներն ու ճանապարհորդ ուխտաւորները պաշտպանելու համար իրենցմէ մի քանի տասնեակ տարիներ առաջ (1062-ին) հոն գացած հերոսի մը հանդիպեցան, որ իրենց բանակին օգնութեան գնաց : Այս անձը Լուսինեաններու ցեղէն Ռոբեր անունով մէկն էր, որ ինչպէս իրենքու մատուցած ծառայութեանցը փոխարէն՝ « Յոպպէի եւ Ասկազոնի կոմս » տիտղոսով վարձատրուեցաւ անոնց պետէն : Իսկ Լուսինեաններու բուն մասնակցութիւնն եղաւ Հիւզ Զ-ով, որ Առաջին ինչպէս իրենքու խմբին հետ մտաւ Պաղեստին, եւ Ռամայի ճակատամարտին մէջ մեռաւ (1102): Այսպէս նաեւ Հիւզ Բ՝ մասնակցելով ինչպէս իրենքու արշաւանքին, Անտիոքի իշխան Պեմունդ Գ-ի եւ Եզեւիայի ու Տրիպոլիսի կոմսերուն հետ գերի ինկաւ Դամասկոսի սուլտան Նուրէդդինի ձեռքը (1164) :

Արեւելքի մէջ հաստատուած Լուսինեաններէն ամենէն նշանաւորն եղաւ Հիւզ Բ-ի չորրորդ որդին Գուրիան, որ ամուսնանալով Երուսաղէմի թագաւոր Պաղատին Դ-ի քրոջ Սիպիլիի հետ (1180), Պաղատին Ե-ի վախճանելէն ետքը՝ Երուսաղէմի թագաւորական գահը բարձրացաւ, 1186 թուին : Բայց այս առաջին յաջողութեան պատճառով ուրախութիւնն երկար ժամանակ չվայելեց Գուրիան, որովհետեւ յաջորդ տարին իսկ՝ Տրիպոլիսի պատերազմին մէջ՝ գերի ինկաւ Սալաճէդդինի ձեռքը. Երուսաղէմն ալ անցաւ ասոր իշխանութեան տակ :

Գուրիան Լուսինեան խոստանալով սուլտանին այլ եւս զէնք չվերցնել իսլամութեան դէմ, ազատ արձակուեցաւ, զրկուելով միայն իր թագաւորութենէն բայց ոչ տիտղոսէն. եւ սակայն մի քանի տարի ետքն Անգլիայի թագաւորէն գնելով Կիպրոս կղզին, գնաց հոն եւ հաստատեց Կիպրոսի Լուսինեան իշխանութիւնը, 1192 թուին :

Այսպէսով Լուսինեանները տէր եղան Կիպրոսի, եւ վերջէն հայկական գահին ընծայեցին Լուսինեան ցեղէ կրկու թագաւորներ :

Այս երկու Լուսինեան թագաւորներէն առաջինն էր վերոյիշեալ Կիլամ Գուրիանը (Կոստանդին Բ), իսկ երկրորդը՝ Կիլիկիայի հայկական հարստութեան վերջին թագաւորը Լեւոն Ե :

